

# ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԳԵՏԱՐԱՆՈՒՄ

1953 թվականի դեկտեմբերի 18—23-ը ՍՍՌՄ Գերագույն Դատարանի Հատուկ Դատական Առյանը հետևյալ կազմով՝

Նախագահող՝ Հատուկ Դատական Առյանի նախագահ Սովետական Միության Մարշալ Ի. Ս. Կոնև և Առյանի անդամներ՝ Պրոֆեսորնայ Միությունների Համամիութենական Կենտրոնական կործարգի նախագահ Ն. Մ. Եվերնիկ, ՍՍՌՄ Գերագույն Դատարանի նախագահի առջին տեղակալ Ե. Լ. Զելյին, բանակի գեներալ Կ. Ս. Մոսկալենկո, ՍՄԿՊ Մոսկվայի մարզային Կոմիտեի Քարտուղար Ն. Ա. Միտայով, Վրաստանի Պրոֆեսորնայ Միությունների կործարգի նախագահ Մ. Ի. Կուչավա, Մոսկվայի քաղաքային դատարանի նախագահ Լ. Ա. Գրոմով, ՍՍՌՄ Ներքին գործերի մինիստրի առջին տեղակալ Կ. Յ. Լուևե, դոնական դատական նիստում, 1934 թվականի դեկտեմբերի 1-ի օրենքով սահմանված կարգով բնեց Լ. Պ. Բերիայի և մյուսների մեղադրմանը վերաբերող քրեական դրոժը:

Մեղադրական եզրակացությունը համապատասխան, դատի են տրվել Լ. Պ. Բերիան՝ մեղադրվելով ՌՍՖՍՌ Քրեական օրենսգրքի 58—1 թք, 58—8, 58—13, 58—11 հոդվածներով նախատեսված հանցագործություններում, Վ. Ն. Մերկուլովը, Վ. Գ. Գեկանոզովը, Բ. Զ. Քարուզովը, Ս. Ա. Գոգիձեն, Պ. Յա. Մեշկիկը, Լ. Ե. Վլոժմիրսկին՝ մեղադրվելով ՌՍՖՍՌ Քրեական օրենսգրքի 58—1 թք, 58—8, 58—11 հոդվածներով նախատեսված հանցագործություններում:

Դատական քննությունը լիովին հաստատեց նախնական քննության նյութերը և բոլոր մեղադրյալներին ներկայացված մեղադրանքները, որոնք շարադրված են մեղադրական եզրակացության մեջ:

Դատարանը հաստատել է, որ, դավաճանելով Հայրենիքին և գործելով օտարերկրյա կապիտալի շահերի օգտին, մեղադրյալ Բերիան կազմակերպել էր Սովետական պետությանը թռչնամի դավադիրների դավաճանական խումբ, որի մեջ մտել էին շատ տարիների ընթացքում Բերիայի հետ համատեղ հանցավոր գործունեությամբ կապված մեղադրյալներ Վ. Ն. Մերկուլովը, Վ. Գ. Գեկանոզովը, Բ. Զ. Քարուզովը, Ս. Ա. Գոգիձեն, Պ. Յա. Մեշկիկը և Լ. Ե. Վլոժմիրսկին: Դավադիրները իրենց առջև հանցավոր նպատակ էին դնում ներքին գործերի մինիստրության օրգանները օգտագործել Կոմունիստական պարտիայի և ՍՍՌՄ կառավարության դեմ, ներքին գործերի մինիստրությունը վեր դասել Պարտիայից ու Կառավարությունից՝ իշխանությունը զավթելու, սովետական բանվորա-գյուղացիական կարգը լիկվիդացնելու, կապիտալիզմի ռեստավրացիայի և բուրժուազիայի տիրապետությունը վերականգնելու համար:

Դատարանը հաստատել է, որ Լ. Պ. Բերիայի հանցավոր դավաճանական գործունեության սկիզբը և օտարերկրյա հետախուզությունների հետ նրա կողմից գաղտնի կապերի հաստատումը վերաբերում է գնդու բաղադրյալական պատերազմի ժամանակին, երբ 1919 թվականին Լ. Պ. Բերիան, գտնելով Քարուզով, կատարել է դավաճանություն, ստանձնելով գաղտնի գործակալական պաշտոն Ազգային կոնսուլատային մուսավաթիստական կառավարության հետախուզության մեջ, որը գործում էր անդլիական հետախուզական օրգանների վերահսկողության տակ:

1920 թվականին Լ. Պ. Բերիան, գտնելով Վրաստանում, նորից դավաճանություն է կատարել, դադարել կապ հաստատելով վրացական մենշևիկյան կառավարության պահանջարկներին հետ, որը նույնպես անդլիական հետախուզության ֆիլիալն էր:

Ճանություն է կատարել, դադարել կապ հաստատելով վրացական մենշևիկյան կառավարության պահանջարկներին հետ, որը նույնպես անդլիական հետախուզության ֆիլիալն էր:

Հետագա տարիներին, ընդհուպ մինչև իր ձերբակալությունը, Լ. Պ. Բերիան պահպանում և ընդլայնում էր գաղտնի կապերը օտարերկրյա հետախուզությունների հետ:

Շատ տարիների ընթացքում Լ. Պ. Բերիան և նրա հանցակիցները խնամքով թաքցնում ու քողարկում էին իրենց թշնամական գործունեությունը:

Ի. Վ. Ստալինի մահից հետո, հույսը դնելով Սովետական պետության դեմ ռեակցիոն իմպերիալիստական ուժերի ընդհանուր ակտիվացման վրա, Լ. Պ. Բերիան անցավ արագ գործողությունների՝ իր հակասովետական դավաճանական գիտավորությունները իրականացնելու համար, մի բան, որը և հնարավորություն տվեց կարճ ժամանակում մերկացնելու Լ. Պ. Բերիային ու նրա հանցակիցներին և խափանելու նրանց հանցավոր գործունեությունը:

1953 թվականի մարտին դստնալով ՍՍՌՄ ներքին գործերի մինիստր, մեղադրյալ Լ. Պ. Բերիան, նախապատրաստելով իշխանության զավթումը, սկսեց դավադրական խմբի մասնակիցներին ուժեղ կերպով ղեկավար պաշտոնների առջ քաշել ինչպես ՆԳՄ-ի կենտրոնական ապարատում, այնպես էլ նրա տեղական օրգաններում: Լ. Պ. Բերիան և նրա գործակիցները դատաստան էին տեսնում ՆԳՄ-ի ազնիվ աշխատողների նկատմամբ, որոնք հրաժարվում էին կատարել դավադիրների հանցավոր կարգադրությունները:

Իրենց հակասովետական դավաճանական նպատակներով Լ. Պ. Բերիան և նրա հանցակիցները ձեռնարկել էին մի շարք հանցավոր միջոցառումներ, որպեսզի ակտիվացնեն բուրժուա-նացիոնալիստական տարրերի մնացորդները միութենական ռեսպուբլիկաներում, թշնամանք ու դժտություն սերմանեն ՍՍՌՄ ժողովուրդների միջև և առաջին հերթին խաբույն ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունը ռուս մեծ ժողովրդի հետ:

Գործելով որպես սովետական ժողովրդի շարամիտ թշնամի, մեղադրյալ Լ. Պ. Բերիան, մեր երկրում պարենային դժվարություններ ստեղծելու նպատակով, սարսափ էր ենթարկում, խանդարում էր Պարտիայի և Կառավարության կարևորագույն միջոցառումների կիրառմանը, որոնք ուղղված են կոլեկտիվիզացիաների ու սովետական Ժողովրդի բարեկեցության անշեղ բարձրացման նպատակին:

Հաստատված է, որ, թաքցնելով ու քողարկելով իրենց հանցավոր գործունեությունը, մեղադրյալ Լ. Պ. Բերիան և նրա հանցակիցները տեղափոխական դատաստաններ էին տեսնում այն մարդկանց նկատմամբ, որոնց կողմից մերկացվելու երկյուղ էին կրում: Դավադիրները որպես իրենց հանցավոր գործունեության հիմնական մեթոդներից մեկը ընտրել էին զրպարտությունը, ինտրիգները և զանազան պրոպագանդաները ընդդեմ ազնիվ պարտիական ու սովետական աշխատողների, որոնք կանգնած էին Սովետական պետությանը թշնամի Լ. Պ. Բերիայի ու նրա գործակիցների դավաճանական գիտավորությունների ճանապարհին և նրանց խանդարում էին ձեռք գցել իշխանությունը:

Դատարանը հաստատել է, որ մեղադրյալներ Լ. Պ. Բերիան, Վ. Ն. Մերկուլովը, Վ. Գ. Գեկանոզովը, Բ. Զ. Քարուզովը, Ս. Ա. Գոգիձեն, Պ. Յա. Մեշկիկը և Լ. Ե. Վլոժմիրսկին, օգտագործելով ՆԳՄ-ի ՆԳՄ-ի օրգաններում իրենց պաշտոնական դիրքը, կատարել են մի շարք ծանրագույն հանցագործություններ՝ նպատակ ունենալով բնաջնջել Կոմունիստական պարտիայի գործին ու Սովետական Միության ժողովուրդներին նվիրված քաղաքական գործիչներին ղեկ, ակտիվորեն պայքարել է Բաքվի ռեյուցիոն բանվորական շարժման դեմ 1919 թվականին, երբ Բերիան գաղտնի-գործակալական պաշտոն ուներ Ազգային կոնսուլատային կառավարության հետախուզության մեջ, այնտեղ կապեր էր հաստատել օտարերկրյա հետախուզության հետ, իսկ հետագայում պահպանում ու ընդլայնում էր իր գաղտնի հանցավոր կապերը օտարերկրյա հետախուզությունների հետ մինչև մերկացվելու ու ձերբակալվելու պահը, այսինքն այն հանցագործություններում, որոնք նախատեսված են ՌՍՖՍՌ Քրեական օրենսգրքի 58—1 թք, 58—8, 58—13, 58—11 հոդվածներով:

Դատարանը հաստատել է նաև Լ. Պ. Բերիայի այն հանցագործությունները, որոնք վկայում են նրա բարոյական խոր քայքայման մասին, և Բերիայի կողմից կատարված հանցավոր շահագիտական գործողությունների ու իշխանության շարաշահումների փաստերը:

Բոլոր մեղադրյալների հանցավորությունը նրանց ներկայացված մեղադրանքներում լիովին ապացուցվեց պատասխանում իսկական փաստաթղթերով, իրեղեն ապացույցներով, մեղադրյալների սեփական ձեռքով կատարված գրառումներով, բազմաթիվ վկաների ցուցմունքներով:

Ապացույցներով մերկացված մեղադրյալներ Լ. Պ. Բերիան, Վ. Ն. Մերկուլովը, Վ. Գ. Գեկանոզովը, Բ. Զ. Քարուզովը, Ս. Ա. Գոգիձեն, Պ. Յա. Մեշկիկը և Լ. Ե. Վլոժմիրսկին դատական քննության ժամանակ հաստատեցին նախնական քննության ընթացքում իրենց տված ցուցմունքները և իրենց մեղավոր ճանաչեցին պետական մի շարք ծանրագույն հանցագործություններ կատարելու մեջ:

ՍՍՌՄ Գերագույն Դատարանի Հատուկ Դատական Առյանը հաստատեց մեղադրյալ Լ. Պ. Բերիայի հանցանքը այն բանում, որ նա դավաճանել է Հայրենիքին, կազմակերպել հակասովետական դավադրական խումբ՝ իշխանությունը զավթելու և բուրժուազիայի տիրապետությունը վերականգնելու նպատակով, կատարել է տեղափոխական ակտեր Կոմունիստական պարտիային ու Սովետական Միության ժողովուրդներին նվիրված քաղաքական գործիչների ղեկ, ակտիվորեն պայքարել է Բաքվի ռեյուցիոն բանվորական շարժման դեմ 1919 թվականին, երբ Բերիան գաղտնի-գործակալական պաշտոն ուներ Ազգային կոնսուլատային կառավարության հետախուզության մեջ, այնտեղ կապեր էր հաստատել օտարերկրյա հետախուզության հետ, իսկ հետագայում պահպանում ու ընդլայնում էր իր գաղտնի հանցավոր կապերը օտարերկրյա հետախուզությունների հետ մինչև մերկացվելու ու ձերբակալվելու պահը, այսինքն այն հանցագործություններում, որոնք նախատեսված են ՌՍՖՍՌ Քրեական օրենսգրքի 58—1 թք, 58—8, 58—13, 58—11 հոդվածներով:

Դատարանը հաստատեց մեղադրյալներ Վ. Ն. Մերկուլովի, Վ. Գ. Գեկանոզովի, Բ. Զ. Քարուզովի, Ս. Ա. Գոգիձենի, Պ. Յա. Մեշկիկի և Լ. Ե. Վլոժմիրսկու հանցանքը Հայրենիքին դավաճանելու, տեղափոխական ակտեր կատարելու և հակասովետական դավաճանական խմբին մասնակցելու մեջ, այսինքն այն հանցագործություններում, որոնք նախատեսված են ՌՍՖՍՌ Քրեական օրենսգրքի 58—1 թք, 58—8, 58—11 հոդվածներով:

ՍՍՌՄ Գերագույն Դատարանի Հատուկ Դատական Առյանը վճռեց.

Լ. Պ. Բերիային, Վ. Ն. Մերկուլովին, Վ. Գ. Գեկանոզովին, Բ. Զ. Քարուզովին, Ս. Ա. Գոգիձենին, Պ. Յա. Մեշկիկին, Լ. Ե. Վլոժմիրսկուն քրտապարտել էին քրեական առավելագույն պատժի՝ զնդակահարության, բռնադատվելով անձամբ նրանց պատկանող գույքը՝ գրկելով զինվորական կոչումներից ու պարգևներից:

Դատավճիռը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

## ԳԱՏԱՎՋԻՌԸ Ի ԿԱՏԱՐ Է ԱԾՎԵԼ

Երևի, դեկտեմբերի 23-ին, ի կատար ածվեց ՍՍՌՄ Գերագույն Դատարանի Հատուկ Դատական Առյանի Դատա-

վճիռը Լ. Պ. Բերիայի, Վ. Ն. Մերկուլովի, Վ. Գ. Գեկանոզովի, Բ. Զ. Քարուզովի, Ս. Ա. Գոգիձենի, Պ. Յա. Մեշկիկի և

Լ. Ե. Վլոժմիրսկու նկատմամբ, որոնք դատապարտվել էին քրեական առավելագույն պատժի՝ զնդակահարության: